ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՄԵՅՆՍԹՐԻՄԻՆԳԸ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ. ՍՏՈՒԳԱԹԵՐԹ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Funded
by the European Union
and the Council of Europe

EUROPEAN UNION

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Implemented
by the Council of Europe

This document has been produced as part of a project co-funded by the European Union and the Council of Europe. The views expressed herein can in no way be taken to reflect the official opinion of either party.

Th opinions expressed in this work are the responsibility of the author and do not necessary reflect the official policy of the Council of Europe

All requestes concerning the reproduction of translation of all or part of this document should be adressed to the Directorate of Communication (F-67075 Strasbourg Cedax or publishing@coe.int

All other correspondence concerning this document should be addressed to the Equality Division of the Directorate General of Democracy.

Cover and layout: Friends of Brands, Kyiv, Ukraine

Photos: Shutterstock

© Council of Europe, November 2020

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՄԵՅՆՍԹՐԻՄԻՆԳԸ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ. ՍՏՈՒԳԱԹԵՐԹ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Դոկ. Էննի Լոր Համբեր [1] [2]

Ի՞նչ բովանդակություն ունի այս ստուգաթերթը:

Այս ստուգաթերթում ներկայացված են այն առանցքային գաղափարները, որոնք բարձրագույն ուսումնական հաստատությունների, հատկապես՝ իրավաբանական ֆակուլտետների կողմից պետք է հաշվի առնվեն գենդերային հավասարության հիմնախնդիրն իրենց ուսումնական ծրագրերում ներառելիս: Ըստ Եվրոպայի խորհրդի[3]՝ իրականացնել §գենդերային մեյնսթրիմինգ¦ նշանակում է ցանկացած քաղաքականության, ծրագրի կամ նախագծի մշակման ընթացքում հաշվի առնել ինչպես կանանց, այնպես էլ տղամարդկանց խնդիրները, կարիքներն ու կենսապայմանները: Իրավաբանական ֆակուլտետների համատեքստում դրա իմաստը կարելի է ընկալել որպես գենդերային հավասարության բաղադրիչի ներառում ուսումնական ծրագրի մշակման բոլոր փուլերում:

Ո՞րն է ստուգաթերթի նպատակը:

Սույն ստուգաթերթի նպատակն է հնարավորություն ընձեռել իրավաբանական ֆակուլտետների հիմնական անձնակազմին, մասնավորապես՝ բուհական կառավարչական մարմնին, դեկաններին, դասախոսներին և այլոց, վերլուծելու և գնահատելու իրավագիտական առարկաների ուսումնական ծրագրերում գենդերային մեյնսթրիմինգի իրականացման ծավալը: Այն կարող է նրանց կողմից օգտագործվել որպես ուղենիշ հետագա գործողությունների կատարման անհրաժեշտության դեպքում:

Ինչպե՞ս կարելի է օգտագործել այս ստուգաթերթը:

Այս ստուգաթերթը պարտադիր ուժ ունեցող փաստաթուղթ չէ. այն ընդամենը մեկնակետ է հետագա վերլուծության և գործողությունների համար: Այն պետք է նաև համապատասխանեցվի համատեքստին, հատկապես՝ բարձրագույն ուսումնական հաստատությունների և իրավագիտական առարկաների ազգային համատեքստի առանձնահատկություններին:

1 Հիմք՝ Humbert, Clayton-Hathway and Tzanakou (2020), https://gearingroles.eu/wp-content/uploads/2020/05/2002-Gender-mainstreaming-in-education.pdf

2 Շնորհակալություն Դոկ. Մարիա Լոպես Բելոզոյին (Դեուստոյի համալսարան, Իսպանիա) և Դոկ. Քարա Բակալիսին (Օքսֆորդ Բրուքս համալսարան, ՄԹ)՝ սույն ստուգաթերթի հետ կապված նրանց արժեքավոր դիտարկումների և ներդրման համար:

3 https://www.coe.int/en/web/genderequality/what-is-gender-mainstreaming

Որո՞նք են միջամտության տարատեսակ ոլորտները:

Բարձրագույն կրթության համակարգում գենդերային մեյնսթրիմինգը նախատեսում է չորս հիմնական հարցի հասցեագրում.

1. Ի՞նչ: Գենդերազգայուն **բովանդակությունը** նշանակում է առարկայի կոնկրետ բովանդակության մեջ գենդերային հավասարության բաղադրիչի ներառման ապահովում: Դա կարող է նշանակել ոչ միայն կանանց և տղամարդկանց միջև անհավասար իրավահարաբերությունների հստակ արգելք, այլև միջոլորտային մոտեցման ապահովում, ներառելով նաև տարբերակման այլ հիմքեր (ինչպիսիք են տարիքը, հաշմանդամությունը, էթնիկ ծագումը և այլն), որոնք կարող են առնչակցվել սեռի և գենդերի հետ:

2. Ինչպե՞ս: Գենդերազգայուն **մանկավարժությունը** պետք է անդրադառնա ուսուցման և ուսումնառության տարբեր եղանակներում գենդերային ասպեկտների ներառման կարգին: Ֆերգյուսոնը[4] գենդերազգայուն մանկավարժությունը բնորոշում է որպես մասնակցային ուսումնառության խթանում, անհատական փորձառության արժևորում, սոցիալական ակտիվության և հաշվետվողականության խրախուսում, քննադատական մտածողության և վերլուծության զարգացում, սոցիալական ինստիտուտների դերի ընկալում և ըմբռնում: Գենդերային հավասարությանն առնչվող մանկավարժական խնդիրները պետք է լուծեն գենդերային կանխակալության հարցը ինչպես մանկավարժների գիտելիքների և վերաբերմունքի, այնպես էլ նրանց դասավանդման պրակտիկայի առումով:

3. Ո՞վ: Հարկ է ներդնել գենդերազգայուն **կառուցվածքներ:** Սա նախատեսում է ուշադրություն դարձնել աշխատակազմի, այդ թվում՝ ծրագրերում կամ մոդուլներում ընդգրկված դասավանդողների գենդերային կազմին: Դասավանդող անձնակազմի անդամները պետք է նաև պատշաճ կերպով վերապատրաստվեն իրենց առարկայի ոլորտում սեռային և գենդերային խնդիրների կարևորության վերաբերյալ հարցերի շրջանակներում, ինչպես նաև ներգրավվեն այդ ոլորտում շարունակական մասնագիտական զարգացման մեջ:

4. Ի՞նչ համատեքստում: Հարկ է, որ բարձրագույն ուսումնական հաստատությունները ներդնեն գենդերազգայուն **էկոհամակարգեր՝** ունենալով բոլոր մակարդակներում (ներառյալ ղեկավար անձնակազմը) ինստիտուցիոնալ հանձնառություն ուսումնական ծրագրերում և գիտահետազոտական աշխատանքներում գենդերային մեյնսթրիմինգ իրականացնելու վերաբերյալ: Դրան հարկ կլինի աջակցել ինչպես պարբերական վերլուծությամբ, մշտադիտարկմամբ ու գնահատմամբ, այնպես էլ համարժեք ռեսուրսներով, ինչպես նաև գենդերի կարևորությանը տեսանելիություն և օրինականություն հաղորդելու միջոցով: Ինստիտուտները պետք է ապահովեն, որ սեքսիզմը, սեռական ոտնձգությունները և գենդերային հիմքով բռնությունը կանխվեն աշխատակազմի և ուսանողության շրջանում/միջև:

4 https://trainingcentre.unwomen.org/RESOURCES_LIBRARY/Resources_Centre/00%20Introduction%20Working%20Papers.pdf

Ի՞ՆՉ

1. Ընդգրկվա՞ծ են արդյոք սեռի և գենդերի հետ կապված հիմնական, առանցքային հասկացությունները իրավագիտության ուսումնական ծրագրում:

ԲԱՑԱՐՁԱԿԱՊԵՍ ՈՉ 1 2 3 4 5 ԱՅՈ

Ուսումնական ծրագրում գենդերային մեյնսթրիմինգ իրականացնելու հիմքը, նախևառաջ, սեռին և գենդերին վերաբերող առանցքային հասկացությունների ներառումն է: Սեռը կարելի է ընկալել իբրև կենսաբանական ցուցիչ, մինչդեռ գենդերը, համաձայն Ստամբուլյան կոնվենցիայի[5], նշանակում է «սոցիալական դերեր, վարքագծի տիպեր, գործունեության տեսակներ և հատկություններ, որոնք տվյալ հասարակությունը դիտում է որպես պատեհ կանանց և տղամարդկանց համար»: Գենդերը, որպես կանոն (սակայն ոչ միշտ), խարսխված է սեռի հասկացության վրա: Հարկ է գենդերն ընկալել որպես հասարակության կազմակերպման հիմնարար սկզբունք, և որպես կանանց ու տղամարդկանց միջև պատմականորեն ձևավորված անհավասար լիազորությունների հարաբերակցության կրող, որն ընկած է նաև կրթական համակարգերի ձևավորման, ինչպես նաև ազգային ու միջազգային օրենսդրական շրջանակների, դրանց մեկնաբանման ու կիրառման հիմքում: Այսինքն՝ իրավագիտության ուսումնական ծրագիրը միտված է արտացոլելու գործող օրենսդրական շրջանակներում ընդգրկված անհավասարությունները և կարող է ամրապնդել գենդերային նորմերը, գենդերային դերերը, գենդերային կանխակալությունները և/կամ գենդերային կարծրատիպերը, եթե այն չարտացոլի գենդերային ասպեկտները: Իրավագիտության ուսումնական ծրագրում սեռին և գենդերին առնչվող առանցքային հասկացությունները վերլուծելիս մենք պետք է քննության առնենք նաև իրավունքի ոլորտային առարկաները (օրինակ՝ ընտանեկան իրավունքը, առևտրային իրավունքը կամ սահմանադրական իրավունքը), և այն հարցերը, թե ինչպես է օրենքը պաշտպանում տարատեսակ իրավունքները սեռի և գենդերի տեսանկյունից, ինչպիսիք են, օրինակ, ընտանեկան իրավունքի համատեքստում ամուսնությունը կամ աշխատանքային իրավունքը հղիության/հետծննդյան արձակուրդի դեպքում: Որպես ուշադրության արժանի հարց՝ կարող է դիտարկվել այն, թե արդյո՞ք «սեռ» և «գենդեր» հասկացությունները, ինչպես նաև դատական կարծրատիպերի վերացումն ընդգրկված են ուսումնական ծրագրում: Կարող է նաև նպատակահարմար լինել ուսումնասիրել, թե տարբեր ոլորտներ կարգավորող օրենքները ինչքանով են կարևորում գենդերային հավասարությունը, ինչպես օրինակ խնամակալության իրավունքի պարագայում, երբ առկա է կանանց նկատմամբ բռնություն:

2. Առկա՞ են արդյոք սեռի և գենդերի հետ կապված առավել ժամանակակից առանցքային հասկացություններ իրավագիտության ուսումնական ծրագրում:

ԲԱՑԱՐՁԱԿԱՊԵՍ ՈՉ 1 2 3 4 5 ԱՅՈ

5 https://www.coe.int/fr/web/conventions/full-list/-/conventions/rms/090000168008482e

Իրավագիտության ուսումնական ծրագրում սեռի և գենդերի հետ մեկտեղ, հարկ է ներառել և վերլուծել ավելի ժամանակակից հասկացություններ: Այդպիսիք են հետևյալ հարցերը. որքանո՞վ են ներառված գենդերային ինքնությունը, սեռական կողմնորոշումը կամ հետերոնորմատիվությունը, և արդյո՞ք օրենքներում առկա է խտրական պրակտիկա: Իրավաբանական ֆակուլտետի ուսումնական ծրագիրը պետք է անդրադառնա այն հարցին, թե ինչպես են հասցեագրվում ինքնության և սեռական կողմնորոշման հասկացությունները իրավական տարբեր համակարգերում՝ առաջադրելով այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ արդյո՞ք օրինական է նույնասեռականների ամուսնությունը, և եթե այո, ապա արդյո՞ք դա ապահովում է ծնողական հավասար իրավունքներ: Այս իմաստով կարելի է ներառել ուսումնական օրինակներ՝ կապված գենդերային ինքնության շուրջ բանավեճերի կարևորության, աշխարհի մի շարք երկրներում նույնասեռականների ամուսնության թույլատրման հետևանքների, ինչպես նաև աստիճանաբար ավելի բազմազան ու նկատելի դարձող ընտանեկան մոդելների առաջացման պարագայում հետերոնորմատիվության հետևանքների հետ: Այժմ առավել անհրաժեշտ է, որ օրենսդրական շրջանակներն աստիճանաբար քննարկեն ընտանիքի այլընտրանքային մոդելներին առնչվող հարցեր, օրինակ՝ այն դեպքերը, երբ երեխաներ են ծնվում և/կամ որդեգրվում նույնասեռ զուգընկերության շրջանակում: Այս իմաստով հատկապես կարևոր կարող են լինել իրավունքի սոցիալ-իրավական ասպեկտներն այն մասին, թե ինչպես են գենդերի սոցիալական կառուցվածքները փոխգործակցում օրենքի հետ, օրինակ՝ ընտանեկան իրավունքի պարագայում, և ինչպես է մշակված ու կազմակերպված ապահարզանի ինստիտուտին վերաբերող օրենսդրությունը՝ այդպիսով հետամուտ լինելով իրավունքի ուսումնասիրման առավել ներառական մոտեցումների ապահովմանը:

3. Առկա՞ է արդյոք միջոլորտային մոտեցման և բազմակի խտրականության հասկացությունը իրավագիտության ուսումնական ծրագրում:

ԲԱՑԱՐՁԱԿԱՊԵՍ ՈՉ 1 2 3 4 5 **ԱՅՈ**

Հարկ է, որ ուսումնական ծրագիրը ներառի միջոլորտային մոտեցումը, որն ընդունում է խմբերին հատուկ ներքին բազմազանությունը և տարբեր խմբերի լիազորությունների անհամաչափության առկայությունը: Միջոլորտային մոտեցումն արտացոլում է կանանց և տղամարդկանց տարբեր խմբերում առկա առավելություններն ու սահմանափակումները, օրինակ՝ նրանց կենսացիկլի տարբեր տարիքային փուլերում կամ հաշմանդամություն ունենալու պարագայում: Օրենսդրության իմաստով միջոլորտային մոտեցումը վերաբերելի է հակախտրական օրենքին, սակայն մատնանշում է մեկ առանցքի վրա կենտրոնացման սահմանափակությունը: Կարևոր կարող է լինել տարբեր ինքնությունների համատեղման, օրինակ՝ կին և ազգային փոքրամասնության ներկայացուցիչ լինելու հետևանքով առաջացող խտրականությունը: Միջոլորտային մոտեցումը միտված է ապահովելու, որ ուժային կառույցները նույնականացվեն, քննադատական վերլուծության ենթարկվեն և վերադասավորվեն՝ հաշվի առնելով ոչ թե մեծամասնություն կազմող մեկ խմբի, այլ բոլոր խմբերի շահերը: Վերջապես, միջոլորտային մոտեցումը կարող է ներառվել իբրև իմացաբանական շրջանակ՝ ճանաչելով իմացության տարբեր եղանակները. ըստ այդմ, օրենքների կառուցվածքն ու մեկնաբանությունը հնարավոր կլինի վերլուծել տարբեր դիտանկյուններից: Միջոլորտային մոտեցման կիրառման անհրաժեշտությունն առավել տեսանելի է մարդու իրավունքների ոլորտում՝ նկատի ունենալով տարբեր խմբերի իրավունքների պաշտպանությունն ապահովելու պահանջը: Ընտանեկան իրավունքի համատեքստում սա կարող է նաև նշանակել տարբեր կրոնական և/կամ էթնիկ խմբերում առկա տարատեսակ ընկալումների և գործելակերպերի ըմբռնում:

4. Արդյո՞ք «սեռ և «գենդեր» հասկացությունները իրավագիտության ուսումնական ծրագրում ձևակերպված են՝ հաշվի առնելով ոչ միայն անհատական մակարդակում առկա, այլև միջավայրի կառուցվածքային գործոնների ազդեցությամբ ձևավորված անհավասարությունները:

ԲԱՑԱՐՁԱԿԱՊԵՍ ՈՉ 1 2 3 4 5 ԱՅՈ

Գենդերային անհավասարությունը դրսևորվում է տարբեր մակարդակներում՝ անհատական (միկրո), կազմակերպական (մեզո) և հանրային (մակրո): Իրավագիտության ուսումնական ծրագրում գենդերային ասպեկտների ներառման իմաստը ոչ միայն անհատական մակարդակում անհավասարությունների դրսևորման եղանակների ըմբռնումն է, այլև այն, թե ինչպես են դրանք ձևավորվում և արձագանքում միջավայրի կառուցվածքային գործոններին: Օրինակ, սեռական ոտնձգությունն օրենսդրորեն ամրագրված է անհատների մակարդակում, սակայն այն կարող է ձևավորվել աշխատավայրում գենդերային հիմքով բռնության վերաբերյալ գործող քաղաքականության ազդեցությամբ և կարգավորվել ներպետական/միջազգային մակարդակում ընդունված առավել ընդգրկուն օրենսդրության հիման վրա: Հնարավոր է նաև փաստարկել, որ օրենքն, ըստ էության, սեքսիստական է, եթե de facto, այն կանանց վրա ունենում է անհամաչափ ազդեցություն, ինչպես օրինակ ընտանեկան իրավունքի պարագայում: Իրավագիտության ուսումնական ծրագիրն, ըստ այդմ, պետք է մանրամասնորեն անդրադառնա այն հարցին, թե առկա՞ է արդյոք փաստացի չեզոքություն, և թե ինչպիսի՞ փոխզիջումային որոշումների կարելի է հանգել առկա տարբերությունների ճանաչման և, այդուհանդերձ, խտրականության դեմ օրենսդրական կարգավորման միջակայքում: Այս դեպքում կարևոր է այն ընկալումը, թե արդյո՞ք օրենսդրությունը հավասար հնարավորություններ ու արդյունքներ է նախատեսում (այսինքն՝ ենթադրվում է, որ կանայք և տղամարդիկ պետք է հավասար վերաբերմունքի արժանանան, օրինակ, ըստ աշխատանքային օրենսդրության), անգամ այն դեպքում, երբ դա չի հանգեցնում հավասար արդյունքների, արդյո՞ք որոշ դեպքերում առանձին խմբերի նկատմամբ անհրաժեշտ է տարբերակված վերաբերմունք (ենթադրելով, որ հարկ է հաշվի առնել առանձնահատկությունները, օրինակ, մայրության պաշտպանության կամ քվոտաների մասին օրենսդրության շրջանակում՝ նպատակ ունենալով շտկել կանանց և տղամարդկանց միջև պատմականորեն ձևավորված անհավասարությունները), կամ, ի լրումն, հարկ կլինի ուսումնասիրել կառուցվածքները (ենթադրելով, որ գոյություն ունեցող կառուցակարգերն ի սկզբանե կանխակալ են գենդերային իմաստով, և որ օրենքը կարող է իր ներդրումն ունենալ ձևավորված նորմերին ու առկա ուժային փոխհարաբերություններին հակազդելու հարցում): Այս իմաստով կարելի է նաև անդրադառնալ նրան, թե քրեագիտության և քրեական օրենքի համատեքստում որքանով է տղամարդկանց՝ բռնություն կիրառելու ավելի մեծ նախատրամադրվածությունն առնչվում առնականության հետ կապված ակնկալիքներին և դրսևորումներին (այդ թվում՝ առնականության վնասակար դրսևորումներին):

5. Ներառվա՞ծ են արդյոք մարդու իրավունքների, հիմնարար իրավունքների, (գենդերային) հավասարության և կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ օրենքների առանցքային հասկացությունները իրավագիտության ուսումնական ծրագրում:

ԲԱՑԱՐՁԱԿԱՊԵՍ ՈՉ 1 2 3 4 5 ԱՅՈ

Մարդու իրավունքները պետք է դրվեն ցանկացած ուսումնական ծրագրում գենդերային ասպեկտների ներառման հիմքում, ինչն ավելի է կարևորվում իրավաբանական ֆակուլտետների պարագայում: Բացի այդ, մարդու իրավունքները հարկ է դիտարկել գենդերային հավասարության տեսանկյունից, քանի որ կանանց իրավունքները մարդու իրավունքներ են: Ուսանողներին հարկ է տրամադրել ուսումնառության

այնպիսի բովանդակություն, որը հասցեագրում է սեռային և գենդերային հավասարության իրավական, քաղաքական ու կանոնակարգման շրջանակները: Դրանք պետք է հասցեագրեն մարդու իրավունքներին, հիմնարար իրավունքներին և իրավահավասարության վերաբերյալ օրենսդրության հետ կապված սեռին և գենդերին առնչվող առանցքային հասկացությունները: Դրանք պետք է ուսումնասիրվեն տարբեր հարթություններում՝ հաշվի առնելով դրանց գործարկման եղանակները կազմակերպական, ազգային, ԵՄ կամ միջազգային մակարդակներում: Օրինակ, ուսանողներին Օլիմպիա դը Գուժի գործունեությունը ներկայացնելիս հնարավոր կլինի քննարկել կանանց իրավունքները՝ որպես մարդու իրավունք: Բացի այդ, ուսումնական ծրագիրը կարող է ներառել առավելությունների և թերությունների այն ընկալումները, որոնք արտացոլված են գենդերային ասպեկտների ներառման վերաբերյալ առավել ընդհանրական կոնվենցիաներում, ինչպիսիք են, օրինակ, ՄԻԵԿ-ը, ՔՔԻՄԴ-ը (ICCPR) կամ որպես տարբերակ՝ հատուկ փաստաթղթերում, օրինակ՝ Ստամբուլյան կոնվենցիայում և ԿԽԲՁՎԿ-ում (CEDAW): Ի վերջո, ուսանողներին կարող են ներկայացվել գենդերին վերաբերող տարբեր թեմաներ, որոնք ամրագրված են հիմնական կոնվենցիաների դրույթներով, ինչպիսիք են՝ (1) ՄԻԵԿ-ի 2-րդ հոդվածը և ՔՔԻՄԴ-ի 6-րդ հոդվածը՝ կապված կյանքի իրավունքի կամ կանանց նկատմամբ բռնության հետ, (2) ՄԻԵԿ-ի 8-րդ հոդվածը (անձնական և ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունք), ՄԻԵԿ-ի 9-րդ հոդվածը և ՔՔԻՄԴ-ի 18-րդ հոդվածը (խղճի և կրոնի ազատության իրավունք), կամ (3) ՄԻԵԿ-ի 11-րդ հոդվածը և ՔՔԻՄԴ-ի 25-րդ հոդվածը (միավորման և հավաքների, և քաղաքական մասնակցության իրավունք): Այս դեպքում կարելի է քննարկումներ ծավալել առ այն, թե սեռն ու գենդերը, իբրև պաշտպանության ենթակա հատկանիշներ, որքանով են ներառված կամ պետք է ներառվեն ատելության հիմքով կատարված հանցանքներին և ատելության խոսքին վերաբերող օրենքներում: Իմաստալից կարող է լինել նաև սեքսիզմի և խտրական կարծրատիպերի դեմ պայքարելուն և դրանց կանխմանն ուղղված միջոցառումների ներառումը, որոնք, ըստ Նախարարների կոմիտեի CM/Rec (2019) հանձնարարականի, ներազդում են կանանց՝ կրթության, տնտեսական և հանրային կյանքում մասնակցության վրա:

6. Արդյո՞ք պարբերաբար վերանայվում են ուսումնական նյութերը՝ գենդերային կարծրատիպերի բացակայությունն ապահովելու նպատակով:

ԲԱՑԱՐՁԱԿԱՊԵՍ ՈՉ 1 2 3 4 5 **ԱՅՈ**

Հարկ է կազմակերպել ուսումնական նյութերի պարբերական վերանայում, որպեսզի դասավանդման բովանդակությունը ոչ միայն ներկայացնի թե՛ կանանց և թե՛ տղամարդկանց կյանքերը՝ դրանց ողջ բազմազանությամբ, այլև խթանի կանանց ու տղամարդկանց հանդեպ թե՛ քանակական և թե՛ որակական տեսանկյունից հակախտրական և գենդերային առումով իրավահավասար դիրքորոշումը: Վերոնշյալը նախատեսում է ընթերցանության ցանկերի բովանդակության, իսկ իրավաբանական կրթության ոլորտում՝ թեմաների և դասընթացի շրջանակներում վերլուծության ենթակա օրինակների պարբերական վերանայում: Կարելի է ներառել ազգային համատեքստում գենդերային հավասարությանն առնչվող նշանակալի գործերի քննարկումը, ինչպես նաև ուսումնասիրել դատական որոշումներում հնարավոր կանխակալությունը, կամ թե ինչպես կարելի է բարելավել իրավիճակը՝ գենդերային հիմքով բռնության, իսկ ավելի կոնկրետ՝ սեռական բռնության ու բռնաբարության խնդիրների վերաբերյալ դատավորներին վերապատրաստելու միջոցով: Ծնողական խնամքի առնչությամբ, հարկ է քննության առնել գենդերային կարծրատիպերի հնարավոր ազդեցությունը անչափահաս երեխաների խնամակալության հետ կապված դատական որոշումների վրա, ինչպես նաև կարևորելով այն դեպքերը, երբ առկա է բռնություն ինտիմ զուգընկերոջ կողմից: Ներկայիս ուսումնական նյութերը պետք է գնահատվեն, քանզի հնարավոր է, որ դրանք սատարում են ընտանիքի նահապետական դրվածքը՝ հիմնվելով գենդերային կարծրատիպերի և կարծրատիպային սոցիալական գենդերային դերաբաշխման վրա: Նշված գնահատումը պետք է անդրադառնա այն հարցին, թե ինչպես են այդ նյութերը ապահովում գենդերի հետ կապված կարևոր թեմաների (ինչպիսիք են՝ բռնաբարությունը, սեռական թրաֆիքինգը կամ մարմնավաճառությունը) ֆեմինիստական վերլուծությունը: Գործածված լեզվական ձևակերպումները ևս կարելի է քննադատական վերլուծության ենթարկել, ինչպես, օրինակ, «ողջամիտ մարդու» թեստի դեպքում, որը պատմականորեն օգտագործել են

որոշ երկրների երդվյալ ատենակալները, և որը կարող էր հանգեցնել կանխակալությամբ ու ենթադրությունների հիման վրա կայացված վճիռների: Մեկ այլ օրինակ է կարծրատիպերի և սոցիալական նորմերի վրա հիմնված իրավական պաշտպանության ստրատեգիաների պատմական զարգացման ուսումնասիրությունը: Քննադատության են ենթարկվել սեռական բռնության դեպքերում կիրառված որոշ ստրատեգիաներ, որոնք կառուցվել են, օրինակ, այն գաղափարի հիման վրա, որ բռնությունը հնարավոր է արդարացնել բռնարարի ինքնատիրապետման կորստի և/կամ տուժողի սադրիչ վարքի հիմքով: Վերջապես, դելիկտային իրավունքի շրջանակում հնարավոր է վնասի հատուցմանը հաղորդել գենդերային բնույթ այն դեպքերում, երբ ավելի փոքր նշանակություն է տրվում ընտանեկան բռնության հետևանքով առաջացած հոգեբանական վնասին, քան վարկանիշային կամ տնտեսական վնասի դեպքերին:

7. Արդյո՞ք ուսումնական ծրագիրն ավանդական մոտեցումների հետ մեկտեղ ապահովում է այլընտրանքային տեսակետներ և դիրքորոշումներ:

ԲԱՑԱՐՁԱԿԱՊԵՍ ՈՉ	1	2	3	4	5	ԱՅՈ

Առարկայական ճյուղերը, որպես կանոն, հիմնվում են կանոնական գրականության, այսինքն՝ ականավոր հեղինակների ստեղծած այն տեքստերի վրա, որոնք առանցքային են համարվում տվյալ գիտակարգի պատմական զարգացման առումով: Ուսումնական ծրագրում գենդերային մեյնսթրիմինգի համար կարևոր է ուսանողներին այլընտրանքային տեսակետներ ներկայացնել և քննարկել, թե ինչպես կարող է մոտեցումների բազմազանությունը խորացնել գիտելիքներն ու ընկալումները: Մարդու իրավունքների շրջանակում գենդերազգայուն և/կամ ֆեմինիստական խնդիրների ներկայացումը կարող է ընդգրկվել ուսումնական ծրագրում: Ավանդաբար, իրավաբանական ֆակուլտետները կենտրոնացել են իրավաբանական մտածելակերպի դասավանդման և ուսանողների իրավական փաստարկման հմտությունների զարգացման վրա: Այդուհանդերձ, ելակետային իրավական փաստարկումն ինքնին գենդերային առումով տարբերակված է, և իրավագիտության ուսումնական ծրագիրը պետք է քննության առնի, թե որքանով է այն խարսխված գենդերային առումով ոչ չեզոք սկզբունքների ու արժեքների վրա: Օրինակ, ֆեմինիստական տեսանկյունից դատական վճիռների վերագնահատումը ցույց է տվել, որ կարելի է հանգել ամենատարբեր եզրակացությունների:

ԻՆՉՊԵ՞Ս

8. Արդյո՞ք գենդերային հավասարությունը ուսումնական ծրագրի առանձին բաղադրիչ է:

ԲԱՑԱՐՁԱԿԱՊԵՍ ՈՉ	1	2	3	4	5	ԱՅՈ

Գենդերային հավասարության խնդիրները պետք է ներառվեն ուսումնական ծրագրում որպես առանձին բաղադրիչ՝ ապահովելով դրանց տեսանելիությունը, օրինականությունն ու կշիռը: Նախընտրելի է դա անել ուսումնառության առավել լայն ծրագրում ամբողջական մոդուլի տեսքով: Այսպես՝ իրավագիտության գծով բակալավրիատի ծրագիրը կարող է ներառել գենդերային խնդիրներին վերաբերող մոդուլ մարդու իրավունքների ավելի լայն շրջանակում (օրինակ՝ Գենդերը և իրավունքը, կամ Գենդերը և ԵՄ օրենսդրությունը): Դրանով հնարավոր կլինի վերլուծել, թե որքան գենդերազգայուն են օրինաստեղծության ներկայացումն ու մեկնաբանումը, ինչպես նաև օրենքների կիրառումը լեզվական, բովանդակային կամ ներգործական իմաստով:

9. Արդյո՞ք գենդերային հավասարությունը իրավագիտության ուսումնական ծրագրի պարտադիր բաղադրիչ է:

ԲԱՑԱՐՁԱԿԱՊԵՍ ՈՉ	1	2	3	4	5	ԱՅՈ

Հարկ է գենդերային հավասարության ասպեկտները ներառել բոլոր (օրինակ՝ ընտանեկան իրավունքի, առևտրային իրավունքի կամ սահմանադրական իրավունքի) մոդուլներում՝ իբրև իրավագիտության ուսումնական ծրագրի պարտադիր բաղադրիչ: Սրա ապահովումն իսկապես կարևոր է, որպեսզի դրանք չմղվեն երկրորդ պլան՝ որպես իրավագիտության ուսումնական ծրագրի հատուկ հետաքրքրության թեմա: Գենդերային ասպեկտները պարտադիր դարձնելը հստակորեն փաստում է, որ խոսքը ոչ միայն կանանց՝ իբրև փոքրամասնության խնդիրները դիտարկելու մասին է, այլև վերաբերում է այն գաղափարի արմատացմանը, ըստ որի գենդերը նշանակում է հասարակության մեջ լիազորությունների հարաբերակցության վերլուծություն ու վիճարկում՝ ի շահ բոլորի (կանանց և տղամարդկանց): Օրինակ, երբ գենդերային հավասարության ասպեկտների ինտեգրումը պարտադիր է դառնում, հնարավորություն է ստեղծվում հասկանալու օրենքի գենդերային բնույթը և կառուցվածքը: Սա տեսանելի է լեզվական ձևակերպումներում. օրինակ՝ ավելի վաղ շրջանի դատական որոշումներում համատեղ կյանք վարող զույգը նկարագրվում էր որպես «տղամարդ և նրա սիրուհի», իսկ այժմ նրանք հանդիսանում են քաղաքացիական ամուսիններ: Իրավագիտության ուսումնական ծրագրում գենդերային խնդիրներին չանդրադառնալը հանգեցնում է դրանցում նման վերաբերմունքի շարունակականությանն ու անտեսմանը:

10. Արդյո՞ք գենդերազգայուն մոտեցումներն ու մեթոդաբանությունները ներկայացված են իրավագիտության ուսումնական ծրագրում:

ԲԱՑԱՐՁԱԿԱՊԵՍ ՈՉ 1 2 3 4 5 ԱՅՈ

Իմացաբանական եղանակները (էպիստեմոլոգիաները) կարող են քննվել զանազան տեսանկյուններից: Գենդերային տեսանկյունից, ըստ գենդերազգայուն և ֆեմինիստական էպիստեմոլոգիայի փաստարկների, ձևավորված և դասավանդվող գիտելիքների մեծ մասը հիմնված է տղամարդկանց փորձառության վրա: Տարբերվող ելակետերի ընդունումը կարող է ուսանողներին ավելի հարուստ մտահորիզոնով օժտել և թույլ տալ նրանց մուտք գործելու աշխարհընկալման առավել լայն տեսածիր: Իրավագիտության ուսումնական ծրագրի առումով, դա նշանակում է բանավեճ հիմնարար սկզբունքների շուրջ, ինչպիսին է, օրինակ, համաձայնությունը, որն օգտագործվում է (կամ չի օգտագործվում) բռնաբարության գործերով կայացված դատական որոշումներում: Սա նշանակում է նաև անդրադարձ բժշկական իրավունքում ինքնավարության կոնցեպտին, օրինակ այն հարցին, թե ինչպիսի վերաբերմունքի են արժանանում մայրության շրջանում կանայք՝ որպես պացիենտներ: Սա նաև ներառում է հարաբերությունների ինքնավարության գաղափարը, ըստ որի անհատները որոշումները չեն կայացնում վակուումի պայմաններում, այլ հաշվի են առնում նաև այլ մարդկանց վրա հնարավոր ազդեցությունները, և որը, համաձայն սոցիալական նորմերի, հավանաբար տարբերվում է կանանց և տղամարդկանց պարագայում: Ընդհանուր առմամբ, ուսումնական ծրագիրը պետք է հաշվի առնի իրավունքի մրցակցային բնույթը, և այն, թե ինչպես (կարծրատիպային մոտեցմամբ) կարելի է սա ընկալել որպես նահապետական դրվածք՝ ի հակադրություն հարաբերությունների առավել համագործակցային և հոգատար մոտեցումներին:

11. Ստեղծվո՞ւմ են արդյոք ուսանողների տարակազմ խմբերում համագործակցային աշխատանքի հնարավորություններ դասավանդման ընթացքում:

ԲԱՑԱՐՁԱԿԱՊԵՍ ՈՉ 1 2 3 4 5 ԱՅՈ

Անհրաժեշտ է ուսումնասիրել ուսումնառության ընթացքում ուսանողների համատեղ աշխատելու եղանակը և այն, թե գենդերային հարաբերություններն ինչպես են ներազդում դրա վրա: Դրա նպատակն է ապահովել, որպեսզի ուսանողների փորձառություններն օգտագործվեն յուրաքանչյուրի ուսումնառության փորձառության հավելյալ արժևորումը: Այն նաև միտված է երաշխավորելու, որ բոլորն ունենան ներդրման հավասար հնարավորություններ, ուսանողական խմբերում/թիմերում լինի գենդերային բազմազանություն, և հնարավոր լինի խուսափել մեկուսացումից: Օրինակ, դասախոսական կազմը պետք է ապահովի, որ ուսանողների թիմում յուրաքանչյուր սեռը ներկայացված չլինի միայն մեկ անձով: Իրավագիտության բնագավառում համագործակցային աշխատանք կարող է իրականացվել գենդերային հավասարության և խտրականության դեմ պայքարի հարցերով իրավաբանական կլինիկաների միջոցով՝ հնարավորություն ընձեռելով ուսանողներին մասնակցելու գենդերային հարցերի հետ կապված գործերի քննությանը և կապակցելու իրենց տեսական գիտելիքներն անձնական տեսակետների ու իրավական գործնական փորձառության հետ:

Ո՞Վ

12. Առկա՞ է արդյոք գենդերային հավասարակշռություն ծրագիրն իրականացնող թիմում:

ԲԱՑԱՐՁԱԿԱՊԵՍ ՈՉ	1	2	3	4	5	ԱՅՈ

Ծրագրերի, իսկ հնարավորության դեպքում նաև մոդուլների շրջանակում կարևոր է խթանել դասավանդման գենդերային հավասար ներկայացվածությունը դասավանդող թիմերում: Սա նաև նշանակում է, որ պետք է գենդերային հավասարակշռություն լինի ծրագրի իրականացման ողջ ընթացքում, և բացառվեն այն դեպքերը, երբ միայն կանայք (կամ տղամարդիկ) են դասավանդում ուսանողներին՝ նրանց ուսումնական ծրագրի առաջին կեսի ընթացքում: Ծրագիրը դասավանդող թիմում հավասար գենդերային ներկայացվածությունը կարևոր խորհրդանշական դեր ունի և ապահովում է, որ իրավագիտություն ուսանող երիտասարդներն այս գործելակերպը գնահատեն իբրև գենդերային իմաստով ներառական՝ ոչ միայն ներգրավված անձանց, այլև իրավագիտության բուն բովանդակության առումով

13. Արդյո՞ք դասախոսական կազմը վերապատրաստվում է գենդերային հավասարությանն առնչվող մանկավարժական խնդիրների վերաբերյալ իրազեկվածության բարձրացման նպատակով:

ԲԱՑԱՐՁԱԿԱՊԵՍ ՈՉ	1	2	3	4	5	ԱՅՈ

Յուրաքանչյուր առարկայական ոլորտում գենդերային հավասարության ասպեկտների կարևորությունը ներկայացնելիս անհրաժեշտ է ապահովել, որ դասավանդող կազմն ունենա պատշաճ գիտելիքներ ու հմտություններ՝ սեփական փորձառության ոլորտներում գենդերային մեյնսթրիմինգի և գենդերային հավասարության հետ կապված բովանդակության դասավանդման համար: Գիտելիքների և հմտությունների զարգացմանն ուղղված վերապատրաստումը (նախընտրելի է՝ շարունակական) կարող է դասախոսական կազմին հնարավորություն ընձեռել ավելի ճիշտ նույնականացնելու գենդերային մոտեցում պահանջող օրինակներն ու դրսևորումները: Կարևոր է գենդերային հավասարության փորձագիտական տվյալները և իմացությունը չհամարել արդեն իսկ ապացուցված. հարկ է պարբերաբար ապահովել բավարար աշխատանք և ռեսուրսներ այս ոլորտում վերապատրաստումների և զարգացման համար: Վերոնշյալը, ըստ Նախարարների կոմիտեի CM/Rec (2019) հանձնարարականի, վերաբերում է նաև գենդերային կարծրատիպերին առնչվող վերապատրաստմանը, սեքսիզմի, նախապաշարմունքների և կանխակալության վերհանման ու հասցեագրման եղանակներին, ինչպես նաև դրանց վիճարկմանը: Բարձրագույն ուսումնական հաստատությունները կարող են մշակել ու հրապարակել առցանց ռեսուրսներ գենդերազգայուն ուսումնառության և ուսուցողական նյութերի համալրման նպատակով, ինչպես նաև օգտագործել գենդերազգայուն մանկավարժության լավագույն փորձը՝ ի նպաստ դասախոսական կազմի շարունակական մասնագիտական զարգացման:

14. Ղեկավարման կառավարման օղակի որոշում կայացնողների շրջանում կա՞ արդյոք իրավագիտության ուսումնական ծրագրում գենդերային հավասարության խթանման հանձնառություն:

ԲԱՑԱՐՁԱԿԱՊԵՍ ՈՉ	1	2	3	4	5	ԱՅՈ

Ուսումնական ծրագրում գենդերային հավասարության ասպեկտների ներառմանն ուղղված ինստիտուցիոնալ ջանքերը պետք է սատարվեն և խթանվեն կազմակերպության ամենավերին մակարդակում: Դա կապահովի պատշաճ մեխանիզմների ներդրումը, համարժեք ռեսուրսների տրամադրումը և այդ ջանքերին կտա օրինականություն ու կարևորություն: Ընդհանրապես, իրավագիտության ուսումնական ծրագրի մի նշանակալի մաս հիմնվում է ազգային իրավագիտական հանրույթի կողմից հաստատման (ակրեդիտացիայի) ենթակա առարկաների և թեմաների վրա, որոնք միշտ չէ, որ գենդերազգայուն են կամ հաշվի են առնում գենդերային առանձնահատկությունները: Այնուամենայնիվ, հստակ է իրավաբանական ֆակուլտետների ղեկավարության դերը գենդերային հավասարության բաղադրիչը և ուսումնական ծրագրում գենդերային ասպեկտները՝ որպես ակրեդիտացիոն գործընթացի պարտադիր մասեր ներառելու հարցում:

Ի՞ՆՉ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

15. Գոյություն ունի՞ արդյոք գնահատման մեխանիզմ՝ մոդուլների նկարագրիչներում գենդերային հավասարության՝ որպես հորիզոնական խնդրի ներառվածությունը գրանցելու համար:

ԲԱՑԱՐՁԱԿԱՊԵՍ ՈՉ	1	2	3	4	5	ԱՅՈ

Հարկ է, որ մոդուլների նկարագրիչները արտացոլեն ուսումնառության բովանդակության մեջ գենդերային հավասարությանն առնչվող հնարավոր ասպեկտները: Կարևոր է ապահովել, որ ուսումնառության այդ բովանդակությունը գենդերային առումով չեզոք չլինի (այսինքն՝ չենթադրի, որ ներկայացվող դիրքորոշումն ունիվերսալ է, ինչը հաճախ հանգեցնում է անդրոցենտրիստական կանխակալության, ինչպես օրինակ իրավունքի այն ոլորտներում, որտեղ անտեսված են կանանց շահերը) կամ հաշվի չառնի գենդերային ասպեկտները (այսինքն՝ չդիտարկի գենդերն իբրև ակտուալ կատեգորիա): Իրավագիտության ուսումնական ծրագիրը պետք է պարբերաբար վերանայվի, որպեսզի ներառված լինեն գենդերային հավասարության խնդիրները, իսկ կառավարման օղակի ղեկավարների տրամադրության տակ պետք է լինեն ֆորմալ մեխանիզմներ՝ բոլոր ծրագրերում վերոնշյալի իրագործումը մշտադիտարկելու նպատակով:

16. Արդյո՞ք հաշվի են առնվում գենդերազգայուն խոսքը և հաղորդակցությունը:

ԲԱՑԱՐՁԱԿԱՊԵՍ ՈՉ	1	2	3	4	5	ԱՅՈ

Խոսքը կարելի է դիտարկել որպես իրականություն արտացոլող, ինչպես նաև այն ձևավորող գործոն: Որպես այդպիսին, սեքսիստական խոսքի գործածման դեպքում այն կարող է ավելի ամրապնդել գոյություն ունեցող գենդերային անհավասարությունը, ոչ թե՝ վիճարկել այն: Սա հատկապես տեսանելի է այն լեզվական համակարգերում, որոնք արական սեռի տերմինները գործածում են որպես համընդհանուր եզրույթ: Այդ իսկ պատճառով, չափազանց կարևոր է ջանքեր գործադրել, որպեսզի գործածվեն գենդերազգայուն խոսք և հաղորդակցման այլ եղանակներ (օրինակ՝ պատկերներ): Նախարարների կոմիտեի CM/Rec (2019) հանձնարարականը կոչ է անում պայքարել սեքսիզմի դեմ խոսքում և հաղորդակցման այլ եղանակներում ՝ դրանք դիտարկելով իբրև գենդերային անհավասարության դիրքորոշումների, վարքագծերի և ինքնությունների ձևավորման հիմնական ասպեկտներ: Այն նաև առաջարկում է կազմակերպել քննադատական քննարկումներ իգական և արական հատկանիշների ձևավորման վերաբերյալ, օրինակ՝ լրատվամիջոցներում ծավալվող քննարկումների կամ իրազեկության բարձրացման արշավների միջոցով:

17. Արդյո՞ք բարձրագույն կրթության համակարգում սեռի/գենդերային հիմքով խտրականության հարցը դիտարկվում է և հանդիսանում է մարտահրավեր:

ԲԱՑԱՐՁԱԿԱՊԵՍ ՈՉ 1 2 3 4 5 ԱՅՈ

Սեռի և գենդերի հիմքով անհավասարությունը դեռևս լայնորեն տարածված է բուհական կրթության համակարգում: Դա տեսանելի է կարիերայի հետ կապված տարբերություններում, ըստ որոնց ավելի քիչ հավանական է, որ կանայք կարողանան զբաղեցնել մշտական (հաստիքացուցակային) պաշտոններ, և ավելի հավանական է, որ աշխատեն ոչ լրիվ դրույքով կամ պայմանագրային հիմունքներով: Բացի այդ, ավելի քիչ հավանական է, որ նրանք զբաղեցնեն ավելի բարձր, այդ թվում՝ որոշումներ կայացնելու լիազորություն ունեցող (օրինակ՝ պրոֆեսորական) պաշտոններ: Անհավասարությունը տեսանելի է նաև գործունեության ընթացքում, քանի որ կանայք սովորաբար ավելի քիչ հրապարակումներ են ունենում և նրանց համար ավելի քիչ հասանելի են ֆինանսավորումն ու դրամաշնորհները: Անհրաժեշտ է գնահատել, թե որքանով է վերոնշյալը վերաբերում իրավաբանական ֆակուլտետներին և առանձին բարձրագույն ուսումնական հաստատություններին՝ հետամուտ լինելով տվյալ հաստատությունում գոյություն ունեցող սեռի/գենդերի հիմքով խտրականության ցանկացած դրսևորման վերացմանը: Այդ գործունեության ընթացքում իրավաբանական ֆակուլտետները պետք է պարբերաբար հաղորդակցվեն և խորհրդակցեն մյուս հաստատությունների հետ՝ միմյանցից սովորելու նպատակով:

18. Մշտադիտարկման և զեկուցման նպատակով պարբերաբար հավաքագրվո՞ւմ են արդյոք ուսումնական ծրագրում գենդերային հավասարության վերաբերյալ տվյալներ:

ԲԱՑԱՐՁԱԿԱՊԵՍ ՈՉ 1 2 3 4 5 ԱՅՈ

Ուսումնական ծրագրում գենդերային մեյնսթիմինգի իրականացմանն առնչվող տվյալները կարևոր են՝ ապահովելու համար, որ հաստատություններն ի զորու լինեն գնահատելու իրենց ելակետային իրավիճակը, ապա մշտադիտարկեն ու զեկուցեն ուսումնական ծրագրում գենդերի ներառման հարցում գրանցվող առաջընթացը: Այս աշխատանքը ներառում է պատշաճ ցուցանիշների հաստատումը և համակարգերի ստեղծումը՝ նշված ջանքերի սատարման և որակի ավելի լայն ինստիտուցիոնալ մշտադիտարկումը տվյալներով համալրելու նպատակով: Ցուցանիշները կարող են վերաբերել դասախոսական կազմի սեռային կառուցվածքին, մոդուլներում և ծրագրերում գենդերային հավասարության ասպեկտների ներառվածության ծավալին, առանձին բաժնով գենդերազգայուն մոդուլների առկայությանը և այլն:

19. Արդյո՞ք մշտադիտարկման և զեկուցման նպատակով պարբերաբար հավաքագրվում են տվյալներ ուսանողական հանրույթում և աշխատակազմում գենդերային հավասարության վերաբերյալ:

ԲԱՑԱՐՁԱԿԱՊԵՍ ՈՉ 1 2 3 4 5 ԱՅՈ

Ուսանողական հանրույթին վերաբերող տվյալների հավաքագրումը և մշտադիտարկումը կարող է ի ցույց դնել, թե որոնք են գենդերային հավասարության ասպեկտների ներառվածության և դրա արդյունքների բացթողումները: Այս իմաստով կարելի է իրականացնել ուսանողների ընդունելության, առաջադիմության և առարկաների ընտրության տարբերակված մշտադիտարկում ըստ սեռի: Այդպիսով հնարավոր կլինի ապահովել գենդերային հարցերով բացթողումների վերհանումը և, հնարավորության դեպքում, դրանց շտկման միջոցառումների ձեռնարկումը: Այս կերպ կարելի է կարևորագույն տեղեկություններ ստանալ այն պատճառների մասին (անկախ նրանից, թե դրանք անհատակա՞ն են, թե՞ կառուցվածքային), որոնք նպաստում կամ ձախողում են սեռերի հավասար ներկայացվածությունը կրթության բոլոր բնագավառներում և մակարդակներում: Ցուցանիշները կարող են վերաբերել ուսանողության սեռային կազմին, գենդերային ասպեկտները հաշվի առնող մոդուլներում ներգրավմանը և այլն:

20. Արդյոք հիմնավորվո՞ւմ է, թե ինչու է կարևոր իրականացնել գենդերային մեյնսթրիմինգ իրավագիտության ուսումնական ծրագրում:

ԲԱՑԱՐՁԱԿԱՊԵՍ ՈՉ 1 2 3 4 5 **ԱՅՈ**

Այն պարագայում, երբ դասախոսական կազմում ոչ բոլորն են ծանոթ գենդերային հավասարությանը՝ իբրև առարկայական ոլորտի կամ իրավունքի ասպեկտի, հարկ է ապահովել, որ նրանք ընկալեն դրա կարևորությունը և իրավագիտության ուսումնական ծրագրի բոլոր բաղադրիչներում գենդերային հավասարության սկզբունքների արմատացման անհրաժեշտությունը: Սա նախատեսում է աշխատանք գենդերային հավասարության սկզբունքների կիրառման տարատեսակ պոտենցիալ օգուտների ուղղությամբ. սկզբունքներ, որոնք հիմնվում են ինչպես մարդու իրավունքների, սոցիալական արդարության, այնպես էլ տնտեսական հիմնավորման մոտեցումների վրա: Նախատեսվում է նաև գենդերային տեսանկյունից գործելու կարևորության պարզաբանում՝ մի շարք վիզուալ և/կամ ինտերակտիվ նյութերի, տեսանյութերի կամ վերապատրաստման նյութերի օգտագործմամբ

21. Առկա՞ են արդյոք համայնքային միջոցառումներ, որոնք ուղղված են հասարակության լայն շրջանում գենդերային հավասարության վերաբերյալ գիտելիքների խթանմանը:

ԲԱՑԱՐՁԱԿԱՊԵՍ ՈՉ 1 2 3 4 5 **ԱՅՈ**

Իրավագիտության ուսումնական ծրագրում գենդերային հավասարության գաղափարախոսության խթանումը կարելի է բարձրացնել՝ աշխատելով ավելի լայն համայնքի և, հատկապես, ուսանողական հանրույթի հետ: Դա կարելի է իրականացնել գենդերային հավասարությանն առնչվող թեմաներով միջոցառումների և աշխատաժողովների կազմակերպման, գենդերային հետազոտություններ ներկայացնող բաց քննարկումներին և ուսանողական տոնավաճառներին մասնակցելու կամ աշխատակազմի և ուսանողների գենդերային իրազեկվածության բարձրացմանն ուղղված քարոզարշավների միջոցով:

22. Առկա՞ են արդյոք գենդերային հավասարության ապահովման, սեքսիզմի վերացման և կանանց ու տղամարդկանց ֆիզիկական, սեռական և հոգեբանական անձեռնմխելիության ապահովման մեխանիզմներ տվյալ ինստիտուտում:

ԲԱՑԱՐՁԱԿԱՊԵՍ ՈՉ	1	2	3	4	5	ԱՅՈ

Կրթության համակարգում կանանց և աղջիկների նկատմամբ գենդերային հիմքով բռնությունը՝ ներառյալ ոտձնգությունները, շարունակում են մտահոգության տեղիք տալ: Ինստիտուտները պետք է տեղեկացված լինեն առկա խնդիրների մասին, պատշաճ քայլեր ձեռնարկեն բռնության ցանկացած դրսևորում կանխելու ուղղությամբ և ապահովեն պատշաճ արձագանք, աջակցություն տուժածներին և իրավախախտների նկատմամբ պատժամիջոցների կիրառում: Սա նախատեսում է նաև վարքագծի չափանիշների հստակեցում, այսինքն՝ պարզաբանում, թե ինչ վարվելակերպ է ակնկալվում ուսանողներից և աշխատակազմից: Անհրաժեշտության դեպքում այս նախաձեռնությունները կարող են քննարկվել օրենսդրության տեսանկյունից՝ անդրադառնալով նրան, թե ինչպես է այն ձևակերպում և կարգավորում գենդերային հիմքով բռնությանն արձագանքը իրավաբանական ֆակուլտետներում, և ընդհանրապես՝ հասարակության շրջանում: Իրավաբանական ֆակուլտետները կարող են ղեկավարվել Նախարարների կոմիտեի CM/Rec (2019) հանձնարարականով, որում կարևորվում է արշավների իրականացումը և/կամ սատարումը՝ գենդերային կարծրատիպերի և հալածանքի, բուլինգի և կիբերբուլինգի, սեքսիստական վիրավորանքների և գենդերային հիմքով բռնության բոլոր ձևերի վերացման նպատակով: Ինստիտուտները պետք է կարողանան ոչ միայն կանխարգելիչ ջանքեր գործադրել, այլև պաշտպանություն իրականացնել և հարկ եղած դեպքում՝ հետապնդում նախաձեռնել:

Սույն ստուգաթերթը լրացնելով՝ իրավաբանական ֆակուլտետների հիմնական աշխատակազմը (օրինակ՝ համալսարանի ղեկավարությունը, դեկանները, դասախոսները և այլոք) կխորհեն և կգնահատեն, թե որքանով է գենդերային մեյնսթրիմինգն իրականացվում իրավագիտության ուսումնական ծրագրում և թե ինչ գործողություններ ու ինչպիսի առաջնահերթությամբ կարելի է ձեռնարկել:

Այս ստուգաթերթի օգնությամբ Ձեր գնահատումներն իրականացվում են չորս տարբեր առանցքների շուրջ. (1) ի՞նչ՝ գենդերազգայուն բովանդակություն, (2) ինչպե՞ս՝ գենդերազգայուն մանկավարժություն, (3) ո՞վ՝ գենդերազգայուն կառուցվածքներ, և (4) ի՞նչ համատեքստում՝ գենդերազգայուն էկոհամակարգեր, որոնք օժանդակում են ձևավորելու ընդհանուր պատկերն այն մասին, թե որքանով են գենդերային ասպեկտները ներառված իրավաբանական ֆակուլտետների ուսումնական ծրագրում, և նույնականացնելու առաջնահերթ ոլորտները: Այս գործիքը հնարավորություն է ընձեռում վիզուալ կերպով ներկայացնելու իրավագիտության ուսումնական ծրագրում գենդերային մեյնսթրիմինգի վերոնշյալ չորս տարբեր առանցքներից յուրաքանչյուրի շուրջ կատարվելիք գործողությունների դաշտը:

ԻՆՉ. ԳԵՆԴԵՐԱԶԳԱՅՈՒՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒ	1	2	3	4	5
Սեռի և գենդերի հիմնական, առանցքային հասկացություններ իրավագիտության ուսումնական ծրագրում					
Սեռին և գենդերին առնչվող առավել ժամանակակից առանցքային հասկացություններ իրավագիտության ուսումնական ծրագրում					
Միջոլորտային մոտեցում իրավագիտության ուսումնական ծրագրում					
Սեռի և գենդերի հասկացություններ իրավագիտության ուսումնական ծրագրում՝ կառուցվածքային տեսանկյունից					
Մարդու իրավունքների, հիմնարար իրավունքների և իրավահավասարության վերաբերյալ օրենքների հասկացություններ ուսումնական ծրագրում					
Ուսուցողական նյութերի պարբերական վերանայում՝ գենդերային կարծրատիպերի բացակայությունն ապահովելու նպատակով					
Ուսումնական ծրագիրն ապահովում է այլընտրանքային տեսակետներ և դիրքորոշումներ՝ ավանդական մոտեցումների հետ մեկտեղ					

ԻՆՉՊԵ՞Ս. ԳԵՆԴԵՐԱԶԳԱՅՈՒՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ	1	2	3	4	5
Գենդերը իրավագիտության ուսումնական ծրագրի առանձին բաղադրիչ է					
Գենդերը իրավագիտության ուսումնական ծրագրի պարտադիր բաղադրիչ է					
Ելակետային և/կամ ֆեմինիստական մոտեցումներն ու մեթոդաբանությունները հաշվի են առնված իրավագիտության ուսումնական ծրագրում					
Դասավանդման ընթացքում ուսանողների տարակազմ խմբերում համագործակցային աշխատանքի հնարավորությունների ստեղծում					

Ո՞Վ. ԳԵՆԴԵՐԱԶԳԱՅՈՒՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ	1	2	3	4	5
Գենդերային հավասարակշռություն ծրագիրն իրականացնող թիմում					
Դասախոսական կազմը վերապատրաստվում է գենդերային հավասարությանն առնչվող մանկավարժական խնդիրների վերաբերյալ իրազեկվածության բարձրացման նպատակով					
Ղեկավարման կառավարման օղակի որոշում կայացնողների շրջանում իրավագիտության ուսումնական ծրագրում գենդերային հավասարության խթանման հանձնառություն					

ԻՆՉ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ. ԳԵՆԴԵՐԱԶԳԱՅՈՒՆ ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԵՐ	1	2	3	4	5
Գնահատման մեխանիզմ՝ մոդուլների նկարագրիչներում գենդերային հավասարության՝ որպես հորիզոնական խնդրի ներառվածությունը գրանցելու համար					
Մշտադիտարկման և զեկուցման նպատակով ուսումնական ծրագրում գենդերին վերաբերող տվյալների պարբերական հավաքագրում					
Մշտադիտարկման և զեկուցման նպատակով ուսանողական հանրույթում գենդերին վերաբերող տվյալների պարբերական հավաքագրում					
Հիմնավորվում է իրավագիտության ուսումնական ծրագրում գենդերային մեյնսթրիմինգի իրականացման կարևորությունը					
Հասարակության լայն շրջանում գենդերային հավասարության վերաբերյալ գիտելիքների խթանմանն ուղղված համայնքային միջոցառումներ					
Գենդերային հավասարության ապահովման, սեքսիզմի վերացման և կանանց ու տղամարդկանց ֆիզիկական, սեռական և հոգեբանական անձեռնմխելիության ապահովման մեխանիզմներ տվյալ ինստիտուտում					

ԼՐԱՑՈՒՑԻՉ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Bartlett, K. T. & Kennedy R. (1991), *Feminist Legal Theory*, Westview Press, Boulder-San Francisco-Oxford. [Բարթլետ, Ք.Թ. և Քենեդի Ռ. (1991), Ֆեմինիստական իրավունքի տեսություն, Վեսթվյու Փրես, Բոուլդըր-Սան Ֆրանցիսկո-Օքսֆորդ]

Conaghan, J. (2009), Intersectionality and the Feminist Project in Law, in Cooper, D., (ed), *Intersectionality and Beyond: Law, Power and the Politics of Location.* pp.21-48. Routledge Cavendish, London. [Քոնեն, Ջ. (2009), Միջոլորտայնությունը և ֆեմինիստական ծրագիրը իրավունքի շրջանակում, տե՛ս Քուպեր, Դ. (խմբ.)՝ Միջոլորտայնություն և ավելին. Տեղակայման իրավունք, իշխանություն և քաղաքականություն, էջեր 21-48, Ռութլեջ Քավենդիշ, Լոնդոն]

Hunter R., McGlynn C. & Rackley E. (2010), *Feminist Judgments, from Theory to Practice*. Hart Publishing. [Հանթըր Ռ., ՄկԳլին Կ. և Ռեքլի Է. (2010), Ֆեմինիստական վճիռներ, Տեսությունից դեպի պրակտիկա, Հարթ Փաբլիշինգ]

Mackinnon, C. (1989) *Toward a Feminist Theory of the State*, Harvard University Press. [ՄկՔինըն, Կ. (1989) Պետության ֆեմինիստական տեսության ճանապարհին, Հարվարդի համալսարանական հրատարակչություն]

Olsen, F. (1990), Feminism and Critical Legal Theory: An American Perspective, in *International Journal of the Sociology of Law*, 18(2), pp.199-215. [Օլսեն, Ֆ. (1990), Ֆեմինիզմը և իրավունքի քննադատական տեսությունը. ամերիկյան դիտանկյուն, Իրավունքի սոցիոլոգիայի միջազգային ամսագրում, 18(2), էջեր 199-215]

Council of Europe's Recommendation CM/Rec (2007)13[6] of the Committee of Ministers to member states on gender mainstreaming in education. [Անդամ պետություններին ուղղված՝ ԵԽ Նախարարների կոմիտեի հանձնարարական թիվ CM/Rec(2007)13[7], կրթության համակարգում գենդերային մեյնսթիմինգի վերաբերյալ]

European Commission's Framework Programme 7 (FP7) and Horizon 2020- Gender Equality Plans. These projects have a created a vast amount of background materials and tools which can be of great use to law schools interested in mainstreaming gender equality in their operations and curriculum[8]. [Եվրոպական հանձնաժողովի շրջանակային ծրագիր 7 (FP7) և Հորիզոն 2020՝ գենդերային հավասարության ծրագրեր: Այս նախագծերը ստեղծել են մեծաքանակ տեղեկատվական նյութեր և գործիքներ, որոնք կարող են մեծապես օգտագործվել իրենց գործունեության և ուսումնական ծրագրում գենդերային մեյնսթրիմինգի իրականացմամբ հետաքրքրված իրավաբանական հաստատությունների կողմից]

European Commission's GEAR-tool[9]. [Եվրոպական հանձնաժողովի GEAR-գործիք (գենդերային հավասարություն ակադեմիական և հետազոտական համակարգում)]

She Figures report[10] from the European Commission. [Կանայք. վիճակագրական զեկույց, Եվրոպական հանձնաժողովից]

6 https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectID=09000016805d5287

7 https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectID=09000016805d5287

8 Ընդհանուր տեսությունը տե՛ս Tornasi and Delaney, 2020 հրապարակման մեջ https://ec.europa.eu/info/sites/info/-files/research_and_innovation/research_by_area/documents/ec_rtd_swafs_report-gender_equality.pdf

9 https://eige.europa.eu/gender-mainstreaming/toolkits/gear

10 https://ec.europa.eu/info/publications/she-figures-2018_en

The Council of Europe is the continent's leading human rights organisation. It comprises 47 member states, including all members of the European Union. All Council of Europe member states have signed up to the European convention on Human rights, a treaty designed to protect human rights, democracy and the rule of law. The European Court of Human Rights oversees the implementation of the Convention in the member states.

www.coe.int

The Member States of the European Union have decided to link together their know-how, resources and destinies. Together, they have built a zone of stability, democracy and sustainable development whilst maintaining cultural diversity, tolerance and individual freedoms. The European Union is committed to sharing its achievements and its values with countries and peoples beyond its borders.

www.europa.eu

Funded
by the European Union
and the Council of Europe

EUROPEAN UNION

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE

Implemented
by the Council of Europe